

ՀԱՅ - ԹՈՒՐԿԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄՐԱԳՐԵՐ.
«ԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՉԻ»
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Armenian-Turkish TRACK

2

DIPLOMACY Projects:

ASSESSMENT OF BEST PRACTICES

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն

International Center for
Human Development



32 ~~33~~
h-24



Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

39/5

Հայ - թուրքական հասարակական դիվանագիտության
ծրագրեր. «լավագույն փորձի» վերլուծություն

Armenian - Turkish Track Two
Diplomacy Projects: Assessment of Best Practices



Երևան, 2006
Yerevan, 2006

**Հայ - թուրքական հասարակական
դիվանագիտության ծրագրեր. «լավագույն
փորձի» վերլուծություն**

Երևան, 2006

**Armenian - Turkish Track Two
Diplomacy Projects: Assessment of Best
Practices**

Yerevan, 2006

Ամերիկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development
www.ichd.org



USAID
ԱՄՆԻ ԿՈՆԴՈՒՅՑՈՒՄԻ



EURASIA FOUNDATION

This publication is made possible by the generous support of the American people through the United States Agency for International Development (USAID). The contents are the responsibility of the International Center for Human Development and do not necessarily reflect the views of Eurasia Foundation, USAID or the United States Government.

Սույն հրատարակությունը ստեղծվել է ամերիկյան ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ: Հրատարակության բովանդակության համար պատասխանատու է Ամերիկային զարգացման միջազգային կենտրոնը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն Եվրասիա հիմնադրամի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Բովանդակություն / Contents

Հայերեն տարբերակ / Armenian Version

Նախաբան	5
Գործարար առաջնորդներ	8
Կանանց ամսագիր	14
Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողով	19
Սոցալոգիայի և կարողությունների զարգացում Կովկասում	27
Երաժիշտների փոխանակում	39
Մեծածախ գյուղատնտեսական վիրտուալ շուկա	48
Կովկասի մարքեթինգային համացանց՝ MANEC	55
Հայ և թուրք հասարակությունների փոխադարձ ընկալումների հետազոտություն	64
Երկխոսություն հայ և թուրք խորհրդարանականների միջև	74
Վավերագրական ֆիլմ մշակութային փոխայցելությունների մասին	84
Տարածաշրջանային տնտեսական աշխատանքային խումբ	91
Տարածաշրջանի քաղաքացիների ծրագիր	99
Լրագրողների փոխայցելություններ	105

Անգլերեն տարբերակ / English Version

PREFACE	114
Business Leaders	117
Women's Magazine	123
Turkish Armenian Reconciliation Commission	128
Leadership Development and Capacity building in the Caucasus	135
Musicians Exchange	146
Virtual Agricultural Wholesale Market	154
Marketing Network of the Caucasus (MANEC)	160
Survey on Mutual Perceptions of Armenian and Turkish Societies	168
Dialog Between Armenian and Turkish Parliamentarians	177
Documentary About the Cultural Exchanges Between Turkey and Armenia	185
Regional Economic Working Group	192
Mayors of the Region	199
Journalist Exchange Program	205

Քաղաքագիտական հասարակության
Ներկայագուցիչներ

ՀԱՅԱՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2003 թ. դեկտեմբերի 12-14-ը Մտամբուլում հանդիպեցին Ղալաստամի, Ազրեբեանի, Վրաստանի և Թուրքիայի տեղական ինքնակառավարման մարմինների պաշտյաններ՝ նրանք ներկայացրին իրենց տեսակետները, գործարար շրջանակների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Մասնակիցները

Համաձայնվեցին խթանել տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը անտերապիս գործունեության վրա ազդեցություն ունեցող այնպիսի տեղիկանվարության փոխանակման միջոցով, որը վերաբերում է մաքսային, ներմուծման-արտահանման արժեքներին և քանակային համակարգերին, ասեկուլը խթանելու նպատակով ստեղծել պարաներմուծի և ծառայությունների վերաբերյալ սովալների համակարգ:

Այնուամենայնիվ, մասնակիցները

ընդունեցին, որ հավանաբարությունները այս երկրների միջև սահմանափակում են ասեկուլային հնարավորությունները և անբարենպաստ ազդեցություն են թողնում խաղաղության և բարեկեցության վրա:

Այդ իսկ պատճառով, մասնակիցները

կովկասյան երկրների իշխանություններին կոչ են անում տարածայնությունները հարթել խաղաղ ծանապարհով՝ բանակցությունների միջոցով, ընդամենը ընկանոնն քաղաքական հարաբերությունները հաստատելով և սահմանները բացելով:

Մտամբուլ
Դեկտեմբեր 14, 2003թ.

Հայ, քուրդ, ազրեբջանցի և վրացի շուրջ 40 հասարակական գործիչների կողմից Մտամբուլում տարագրված հայտարարությամբ, ըստ էության, ավարտվեց մոտ 3 տարի տևած հասարակական դիվանագիտության հայ-քուրդական ծրագրերի մակամեծման և իրականացման առաջիկ ակտիվ ժամանակահատվածը: Ժամանակահատված, որի ընթացքում բազմաթիվ փոխայնություններ եղան, համընկեր ու քննադիտներ կազմակերպվեցին, հողկամներ ու ամբողջական ամսագրեր տպագրվեցին, ֆիլմեր նկարահանվեցին, հայտարարություններ հնչեցվեցին, վերապատասխանում տաանյակ դաշնբացմանը անցկացվեցին ու հետազոտությունները երապակվեցին: Այս թվարկումը կարելի է երկար չարտահանել:

Ամենակերտըր տակայն, որ մնաց այդ ժամանակահատվածից, մարդկային պատմություններն ու հուշերն են, որ պիտի չարտահանեն տարածվել ու վերապատմվել, ամհատական ու ինստիտուցիոնալ կապերն են, որ այլևս պիտի մնացնեն երկու ու բարեկան երկրների բազմաթիվ քաղաքացիների ու կազմակերպությունների: Երկու երկրների ստեղծված հասարակական հատվածների բազմաթիվ ներկայացուցիչների համար փոխվեց մի բան. այն, որ հարևան երկիրը ստեղծ վարագույնից անդին չէ. այն իրականում հասանելի է, և այնտեղ էլ ապրում են մեր պեն մարդիկ, ովքեր սովորում են, աշխատում, սիրում են իրենց ընտանիքն ու կարող են ընկերություն ա-

նել: Առաջին հայացքից շատ պարզ ճշմարտություններ, որոնք իմաստավորվում են հարողդակցման հնարավորության դեպքում միայն:

Հիմնականում ԱՄՆ, Պետդեկարտամենտի աջակցությամբ և Վաշինգտոնի Ա-մերիկյան համալսարանի հովանու ներքո 2001-2004թթ. ընթացքում իրականացվեցին տասնյակ հայ-քուրդական հասարակական դիվանագիտության ծրագրեր: Իրենց ընգրկվածության տեսանկյունից դրանք տարբերվում էին տարածաշրջանային ինտեգրացիոն բնույթի այն բազմաթիվ ծրագրերից ու համաժողովներից, որոնք ընգրկելով տարածաշրջանի երկրների հասարակական հատվածի ներկայացուցիչներին, իրականում կենտրոնանում են տարածաշրջանային նշանակության խնդիրների վրա: Այս ծրագրերն իրենց կիսակետում ունեին կոնկրետ հայ-քուրդական հարաբերությունների խնդիրը, և գործունեությունը, որ ծավալվում էր դրանց շրջանակում, միտված էր հենց Հայաստանի և Թուրքիայի միջև անկա իրողություններին:

Ժամանակը ցույց տվեց, որ այսօրիցնակ գործունեությունը ոչ միայն անհրաժեշտ է, այլև խիստ արդյունավետ կարող է լինել դիվանագիտական հարաբերություններ շարունակելու երկու երկրների միջև հարաբերությունների մեղմացման և այդ հարաբերությունների ազագույն կարգավորման համար բարենպաստ միջավայր ստեղծելու գործում: Սա նշանակում է, որ երկու հարևան երկրների միջև դրացիական բնականում հարաբերությունների հրամայականը վաղ թե ուշ անխլակու է կրկին ակտիվացնել երկրների քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչներին շփումներն ու հասարակական դիվանագիտության ծրագրերի իրականացումը:

Այս հանդիպումությունն էր հենց, որ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄՀՄԿ) փորձագետներին դրոնց արդեն իսկ իրականացված հայ-քուրդական հասարակական դիվանագիտության ծրագրերի վերլուծության նախաձեռնությամբ հանդես գալ: Մի նախաձեռնություն, որ նպատակ ուներ արդեն գոյություն ունեցող փորձի հիման վրա վեր հանել այսօրիցնակ ծրագրերի իրականացման անհամահասկությունները, փորձել պատասխանել հարցերի, քե որոշումով արդյունավետ կարող են դրանք լինել, ինչպիսին էին արդեն իրականացված ծրագրերի ընդհանուր գծերը, ինչ ունեղ և թույլ կողմեր ունեին դրանք, ինչ ազդեցություն թողնեին շահատուների տարբեր խմբերի վրա և, որ ամենակարևորն է, ինչ դասեր կարելի է քաղել այդ ծրագրերից:

Մի այն ակնհայտ է. Հայաստանի և քուրդիայի հասարակական հատվածների միջև համագործակցային նախաձեռնությունների ակտիվացման հերթական փուլում այլևս հարկ չի լինի ամեն ինչ սկսել մոռոց: Կա ժամանակ, և այս գրքույկն ամփոփում է այդ փորձը: Այստեղ ներկայացված են նշված ժամանակահատվածում իրականացված ծրագրերի վերլուծությունները, որոնք եզրահանակումների, նոր մտախզացումների և հնարավոր սխալներից խուսափելու հնարավորություն կարող են ընձեռնել ընթերցողին: Որպես այդպիսին, գրքույկը նախատեսված է հասարակական կազմակերպությունների, ժամույկի, հայ-քուրդական հարաբերություններով հետաքրքրվողների և դոնոր կազմակերպությունների համար:

Չեռնամուխ փնեկով նշված ծրագրերի վերլուծության աշխատանքների՝ ՄՀՄԿ փորձագետները փորձել են հնարավորինս խուսափել «ներսուներ» կամ «մեկ-մեկորեն» փնտրելու պրակտիկայից, փուլաբեր կարևորել են փորձը, օրինակով իրականացումն ու երևույթների պատճառահետևանքային կապերը, կոմերտ օրի-

նակների վրա առանձնագվել են այն բոլոր հետևությունները, որոնք օգտակար կարող են լինել այդօրինակ ազգագրամասնագետներին:

Երագրերից յուրաքանչյուրն ուսումնասիրության մի քանի փուլ է անցել: Նախ քննության են առնվել ծրագրային փաստաթղթերը՝ ծրագրային առաջարկը, արդյունքների փաստաթղթային արձանագրությունները, հաշվետվությունները, մասնուի հրապարակումները և այլն: Նախագիծ մշակված մեթոդոլոգիայի հիման վրա կազմված մանրամասն հարցաշարի օգնությամբ հարցազույցներ են անցկացվել ծրագրերն իրագործած հայկական և թուրքական կողմերի, դրանց իրականացման օժանդակած արտերկրյա փորձագետների, դոնոր կազմակերպության ղեկավարների և ծրագրերի շահառու խմբերի ներկայացուցիչների հետ: Մտեղծված ողջ տեղեկատվությունն այնուհետև համադրվել ու վերլուծվել է: Վերջնական վերլուծականները հրապարակվեց առաջ անցվել են նաև անվան փորձագետների քննության փուլը, որում վերլուծականները «Երրորդ աշխի» սկզբունքով գտվել են «ժամընդհանրության» և «զավարչության փորձի» տեսանկյունից:

Հայ-թուրքական հասարակական դիվանագիտության ծրագրերի վերլուծության նախաձեռնությանն օժանդակելու համար փորձագետական խումբը շնորհակալություն է հայտնում Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանի Համընդհանուր խաղաղության կենտրոնի Հասարակական դիվանագիտության ծրագրի ղեկավար Դեյվիդ Ֆիլիպսին և նույն կենտրոնից տիկին Բերի Սիրիլային: Թուրքիայում հարցազույցների կազմակերպման և անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման մեր ջանքերը, ընդհանուր առմամբ, արդյունավետ էլին լինի առանց պարոն Նոյան Մոլայի և տիկին Բարչու Գյուլբեկիմի անգնաստեղծ օգնության:

Փորձագետների խումբն իր երախտագիտությունն է հայտնում նաև այն բազմաթիվ մարդկանց, ովքեր ժամանակ գտան և պատրաստակամությամբ մասնակցեցին հարցազույցներին՝ անվերապա կիսելով իրենց տպավորություններն ու մտքերը:

Ի վերջո, փորձագետներն իրենց երախտիքն են արտահայտում «Եվրասիա» հիմնադրամի երեսնյան գրասենյակին և ամերիկյան դիվանագետ Անարոն Շրիին՝ քանի նախաձեռնությանը ֆինանսավան և քաղաքական աջակցություն ցուցաբերելու համար:

Գործարար առաջնորդներ

«Քիզնես և խաղաղաշինություն

Գործարար համայնքը բնականորեն շահագործված է աշխարհում խաղաղության պահպանման խնդրով: Խաղաղության ընդլայնումն մշակված է չուկաների ընդլայնում, իսկ չուկաների ընդլայնումը ներառում է ավելի մեծ եզրամասներ: Այնպես, գործարար աշխարհին հասանելի է այն կայսրությանը, որն անհրաժեշտ է մարդկության ազգային համար աջակցել կենսական խաղաղաշինության մեր մարդկությանը կատարելու համար: Այս գործունեությունն են բերելու և խողովալություն են մեր ևսկա բնական համագործակցային կապի մասին»:

Թագավանազարակ դիվանագիտության ինստիտուտ
<http://www.imtd.org/initiatives-businesspeacebuilding.htm>

Երագրի իրականացման գործընթացը

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (Հայաստան) և Հանրային կիմանալոգիների հետազոտության կենտրոնի (Թուրքիայի) համագործակցություն այս ծրագրի շրջանակներում ուղղված էր երկու երկրների գործարարների երկխոսության խթանմանը: Երագրի նպատակն էր գործարարների մեջ առաջ թիմ հավաքել, որն իր ակտիվ գործունեությամբ կխթաներ երկխոսության շրջանակների ընդլայնումը՝ հանգեցնելով ավելի ու ավելի մեծ խումբ գործարարների ներքայնազգ գործընթաց: Ռազմա նպատակի իրագործման ինստիտուցիոնալ միջոց նախատեսվում էր տարաբաժաշխանային անտարաբաղումաբերական լզաբարձի տեղեկություն:

Երագիրը տեղե ընդամենը չորս ամիս (2003թ. հոկտեմբերից 2004թ. հունվար): Թերևս հենց դա է պատճառը, որ վերջնական նպատակարարման իրականացման տևականություն այն դժվար է իրագործված համարել: Պատճառն ակնհայտ է՝ ծրագրի վերջնական նպատակները ենթադրում էին երկարաժամկետ, շարունակական, որոշակի առումով, բերև, նաև ինքնահարազ գործընթաց: Մակայն կարճաժամկետ հետազոտային առումով ծրագիրը, ինքնին, հաջողված է, քանզի հաջողվեց տեղեղել այն հիմքը, որի հիման վրա կարելի է շարունակել այսօրինակ գործունեությանը՝ ազատիկով ծալ և թուրք գործարարների երկխոսություն ու բնականորեն գործակցություն: Մասնավորապես, արդեն մեակորված են Հայաստանի մարզերը և Թուրքիայի արևելյան շրջանները ներկայացնող գործարարների առաջին պիլոտային խմբերը, որոնք հետագայում կարող են դառնալ երկխոսության ծավալման լավ հիմք: Ընդ որում, առաջին չիտումները հիշյալ խմբերի միջև ոչ միայն կայացել են, այլ նաև արձանագրվել են որոշակի արդյունք՝ երկու երկրների գործարարներն արդեն համատեղ տեսակետ են մշակել տեխնիկական և առևտրային, որն արտագույնվել է համատեղ հայտարարության տեսքով: Համագործակցության հենարանը հետազոտողների շուրջ ընդհանուր քննարկումները, չնայած չարձան կոնկրետ նախագիծն ու գործունեություն, սակայն վեր հանեցին այսպահային և հետազոտային տնօրենական կապերի և զարգացումների գերակա ուղղություններն ու միասին գործելու հարաբերական առավելությունները:

Ուժեղ և թույլ կողմերը

Ծրագրի նպատակն էր երկու երկրների գործարար շրջանակների մերկայացուցիչների երկխոսության խթանումը՝ հնարավոր համատեղ գործարար նախագծերի իրականացման հեռանկարով: Այսօրինակ նպատակը շատ ավելի հասանելի է բժում, քանի որ երկու երկրների գործարար շրջանակների ոչ պաշտոնական կապեր աղմեկ իսկ կան, այսօր էլ, հասկալապես առևտրի բնագավառում, միջնորդավորված և ուղղակի կապերն աշխատում են և, ի վերջո, գործարարության մեջ քաղաքականություն, թվում է, պակաս դեր ունի այլ ուղղություններով իրականացվող հասարակական դիվանագիտության ծրագրերի համեմատ: Ընդհանրապես, բիզնեսը շատ ավելի քիչ է խառնվում տարբեր տիպի շահարկումներին, մինչդեռ գործարարների ծայրն ավելի թե՛ղի է քաղաքականություն մշակողների մոտ: Այս տեսանկյունից, հասարակական դիվանագիտության ոլորտում գործարարների մերգրավումը բավականաչափ արդյունավետ կարող է լինել:

Նախքան «Գործարար առաջնորդներ» ծրագրի նախաձեռնումը, իրականացվող հայ-բուրջական տարաբնույթ ծրագրերից արդեն իսկ երևում էր, որ գործարար շրջանակներում փոխադրված շվեդներին մեծ պահանջարկ կա: Այդ պահանջարկը, կարծես, միշտ էլ եղել է, ու այժմ էլ կա: Սա նշանակում է նաև, որ այսպես լայն աչք ուղղումով երևի այլ ծրագրի նախաձեռնելու դեպքում ծրագրի նպատակների ու խնդիրների իրագործման նկատմամբ շահառուների կողմից պահանջարկ մեակոնելու ամերիաժշտություն չի զգացվի, կամ առնվազն պակաս ջանքեր կպահանջի: Նման պահանջարկ ծրագրի իրականացման ընթացքում հատկապես նկատվում էր Թուրքիայի արևելյան շրջանների գործարարների շրջանում, ովքեր իրենց գործարար շահերից ելնելով խիստ հետադարձված են սահմանակից Հայաստանի ներքին շուկայի հնարավորություններով: Ավելին, առանձին բուրջ գործարարները Հայաստանի գործարարների հետ համագործակցությունը լավ հնարավորություն են դիտարկում Ռուսաստանի սուկայական շուկա որոշ գալու տեսանկյունից:

Հայ-բուրջական հասարակական դիվանագիտության յուրաքանչյուր ծրագիր, որի կիսակետում գործարար աշխարհի մերկայացուցիչներ են, հավակնում է դառնալ մեծապես ինքնավերարտադրող նախաձեռնություն, քանի որ գործարարներն, ի տարբերություն այլ ծրագրերում մերգրավված հասարակական հատվածի, ԶԼՄ մերկայացուցիչների կամ քաղաքական գործիչների, հիմնականում ծրագրերը դիտարկում են ոչ որպես հասարակական գործունեություն, այլ մերդրում իրենց ազգագործարար ծրագրերում և հաճախ պատրաստակամություն են հայտնում սեփական միջոցներով մասնակցել ծրագրի հետագույն ծավալմանը:

Ծրագրի իրականացման ընթացքում, ըստ առանձին մասնակիցների, հրճացա տեղի էին ունենում նպատակների փոփոխություններ: Սա անորոշություն էր ստեղծում: Նպատակը լավ հանդիպումը չէր, այլ այն, որ բիզնես ծրագրեր ծնվեին: Հանդիպումները քիչ էին, հարկավոր էր, որ ոչ միայն հայերը գնային Ստամբուլ, այլ նաև հակառակ այցելություններ կազմակերպվեին:

Թե խորապես տեսանկյունից ինչպես պետի ավարտվող ծրագիրը, մասնակիցները մեծամասամբ չէին պատկերացում: Ենթադրվում էր, որ ոչ ոք էր սահմանել կրագրի: Ծրագրի արդյունավետ իրականացման տեսանկյունից սա ռիսկ էր. իսկ ի՞նչ կլինի, եթե սահմանը չլրացվի: Սահմանը չլրացվեց, ծրագիրը մնալով:

Նմանօրինակ ծրագրի իրականացման պետք է շրջանառության մեջ դնել բոլոր նպատակներ, որոնց իրականացումն է սկզբանե ապահովված չէ համապատասխան մետաղներով: Այն պահին, երբ կոնկրետ քայլեր են իրականացվում ծրագրի մասնակիցների կողմից և պարզ է դառնում, որ ֆինանսական միջոցներ չկան, մասնակիցները հիասթափություն են ապրում: Այս ծրագրի շրջանակներում, օրինակ, նախատեսվում էր ստեղծել տարածաշրջանային արդյունաբերական պահաս, որը կոնքրետ համագործակցության ինտեսուցիտման հիմքեր էր տարածաշրջանային համագործակցության իրական նախադրյալներ կտեղծեր: Գաղափարն իրականություն դարձավ, քանզի այն պահանջում էր ֆինանսական գրգռի միջոցներ, որոնք պարզապես չկային:

Ազդեցությունը շահառուների տարբեր խմբերի վրա

«Առաջ կարծում էի, թե բուրջերը մեծ առեկոչքայան են ցված մեր նկատմամբ: Հանդիպումների ընթացքում տեսա, որ դա ամենինք էլ այդպես չէ: Իսկ մարդկային մակարդակում խնդիրներ, կարծես, չկան»:

Ծրագրի մասնակից հայ գործարար

«Հարևան երկրի մասին պատկերացումները մակարդակում են բերբերից, հեռուստատեսությունից, պատմական գրքերից: Արդյունքում այդ երկիրը որպես հավաքական ամբողջություն ընկալվում է իբրև «քյանակայան»: Հանդիպումները փոխում են պատկերը, տեսնում ես տարբեր մարդկանց, լսում տարբեր կարծիքներ, գորչ պատկերը կամաց-կամաց տեղի է տալիս, հարևանը դառնում է ավելի կամայատեսելի»:

Ծրագրի մասնակից հայ գործարար

Հայ և բուրջ գործարարների՝ քաղաքականությունից վեր հանդիպումների ինքը դրվեց, ինչ-որ բան կտարվեց, նախապատմություն ստեղծվեց: Գործարարների հանդիպումների մասին խոսակցությունները ծավալվեցին: Հասարակության մեջ սերմանվեց մի մտայնություն, որ այսպիսի հանդիպումները բառ էություն հնարավոր են: Վերջապես գործարարներն իրենց համար իրենց գործունեության որդուրեն անվճար մասնակցական հարցեր ճշտեցին և փորձ կատարեցին: Որպես ծրագրի արդյունք մնաց որպեսզի մի հետք, որ, բեռ էական բեկում չլիքելով քաղաքականություն հարցությունում, միջպետական հարաբերությունների մակարդակում, հնարավորություն է բողմում հետագույն մեմորիանակ շվեդների կազմակերպման, որի դեպքում, բերես, հարկ չի լինի ամեն ինչ սկսել սկզբից:

Ի՞նչ դասեր կարելի է քաղել:

Նման ծրագրերում դրանց առաջին՝ այսպես կոչված մարտնչման (ice breaking) փուլը չի մեկնարկում բուրջական դարձած պատմական և քաղաքական բեմաների բնարկմամբ ու դրանց նկատմամբ փոխադարձ դիրքորոշումների պարզաբանմամբ: Փորձը ցույց տվեց, որ առաջին իսկ հանդիպումից հարաբերությունները հայ և բուրջ գործարարների միջև մտնում են գործարար դաշտ և խոսակցությունում ավելի

չուտ բերանում է համատեղ գործունեության հնարավորությունների՝ արտադրության կամ որևէ ոլորտում ծառայություններ մատուցելու շուրջ: Սակայն այդ առավելությունը ճիշտ պահպանելու համար, անհրաժեշտ է, որ այսպիսի ծրագրերի մեջ մեթոդական միայն գործարար հասովածի ներկայացուցիչներ, հավասարակշռված, երբ հանդիպումներ կազմակերպվում են խաղաղ ֆորմատով, մեթոդավորում են մասնակցի պահանջները, օրինակ՝ հասարակական գործիչներ, գիտնականներ է այն, ապա խտանկցությունը բիզնեսի շուրջ այնուամենայնիվ շեղվում է իր հունից, ավելորդ հուզականություն է հաղորդվում հարաբերություններին, ինչը գործարարի ավելորդ շատ շատով դառնում է անհետաքրքիր է ծանցրախ՝ հանգեցնելով բուն նախաձեռնության հանդեպ գործարար հետաքրքրության նվազման:

«Գործարար աստիճանը» ծրագրից ցույց տվեց մաս, որ նմանօրինակ նախագծերը պակաս արդյունավետ են լայնամասշտաբ հասարակական դիվանագիտության մեխանիզմը գործի դեմը սկզբնական փուլում, սակայն կարող են լուծուսույթի դեր խաղալ ավելի ուշ փուլերում: Գործարարը ավորապես մտնում է նման ծրագրի մեջ «շտառով ասնիմանը կրպակով» մտայնությունը, ի տարբերություն, ասանք, հասարակական կազմակերպությունների, որոնք նշանաբան ավորապես լինում է «որպեսզի ասնիմանը քայսիվ»: Գործարարը պիտի զգա ասնիմանների բացման մոտարտ հնարավորությունը է միայն այդ ժամանակ պատրաստ կլինի նաջակցել գործընթացին է մասնակցությունը, է իրական ռեսուրսներով, է քաղաքական հարաբերությունների է կամ լրբիքից միջոցներով: Սա է պատճառը, որ բիզնես հանրության ներգրավմանը ծրագրերը պետք է մնան որպես պահուստային ծրագրեր՝ իբրև այլ խմբերի կողմից իրականացվող ծրագրերի հասարակական հնչողությանը ստեղծված մթնոլորտը կմեկրեստ արդյունքների հանգեցնող կարող գործիք:

Գործարարների հետ անհրաժեշտ է միջնորդակալված աշխատել՝ միջնորդի դերը հասննելով հասարակական կամ մասնագիտացված կառույցներին: Նման միջնորդակալված մոտեցման կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ վերջինի հաշվով իրենք մասնագիտական գործունեության հետ ուղղակի առնչություն չունեցող հասարակական դիվանագիտության զարգացմանն ուղղված նման ծրագրերի կազմակերպումն ու կատակարարել պահանջում են զգալի ժամանակային է մարդկային ռեսուրսների ներգրտում, տեխնիկական մի շարք խնդիրների լուծում է իրագործում՝ կազմված, ասանք, փոխադարձ արդյունավետ հարաբերական ասպանովում հետ, ինչն իր հերթին ներգրտում է, օրինակ, հարևան երկրներում բնակվող գործարար համայնքների միջև հասկանալի լեզվով հաղորդակցություն կազմակերպում կամ համատեղ միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացում: Նման ռեսուրսների ավելցիկ գործարարները պարզ պատճաններով չունեն, է պարտադրել չէ, որ նրանք ունենա նման միջոցառումների կազմակերպման անհրաժեշտ հնարություններ, ուստի նման ծրագրերում գործարար խավը հանդես պիտի գա զուտ շահատուի դերում:

Միևնույն ժամանակ գործարարը չի սիրում երկար-բարակ խտանկցություններ քնդհանուր քննանքի կամ խնդիրների գիտական մոտեցումների շուրջ, քի քանի օր տեղ կոնիերաններ՝ շարունակական ճանտրել է խիստ կանոնավոր օրակարգով: Դրա փոխարեն անհրաժեշտ է, որ նման ծրագրերը լրացվեն է հարաբարակիկ գործարար աջակցություններով, ասանք, որևէ կոնկրետ արտադրություն, ստեղծ գործարար դաշտին է դրա կողմից արտադրվող ապրանքների ու մատուցվող ծառայ-

ությունների հետ ծանոթացնող է միջանց հետ գործարար հարաբերությունների ստեղծմանը խթանող կոնկրետ միջոցառումների: Շատ ավելի հետաքրքիր կարող է լինել համատեղ ցուցանանքներին, տոմսակառուների կազմակերպում: Իսկ քննարկումների կողմ կազմակերպելուց պիտք է հազ տանել, որ դրանք ունենան քննատիկ ուղղվածություն, քնրանան կոնկրետ ոլորտներում շահագրգիռ խնդիրի մասնակցությանը, օրինակ՝ տեղադիր արդյունաբերության կամ տարիքի ոլորտում ծառայություններ մատուցողների խմբեր է այլն:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հենց անտուրք է այն ոլորտը, որն աննաշտալ կարող է գործարարներ ներգրավել այսօրինակ ծրագրերի իրականացման գործընթացում: Սակայն փորձը ցույց է տալիս, որ անտուրք մեծ խանգարել է կապված քաղաքական գործընթացների է զարգացումների հետ, փակ ստանանները վայր թե ուշ լուացնելու են երկու կողմերի գործարարների շուրտը: Ինչպիսի վարդագույն պլաններ էլ մշակում են գործարարները, տնտեսական շահավետությունը քրովին այլ ուղղությամբ է տանում զարգացումների պլանադը: Միջոցառումն այն պայմաններում պետք է նկատել, որ գոյություն ունեն ոլորտներ, որոնց համար ստանանների փակ լինելու խնդիրը կարծես առաջնային դեր չի կատարում: Նման ոլորտի օրինակ կարող է ծառայել ֆինանսական շուկաներում համատեղ գործունեությունը չլիռչության ոլորտը, ապագավորություն է այլն: Ասվ օրինակ է զբոսաշրջությունը: Անմոտեղի է, որ քաղաքական ներկա պայմաններում անգույն խաղաղիվ հայտանստներին իրենք հանգիստն անցկացնում են Թուրքիայի հայտնի հանգուստան գոտիներում, հետևաբար տարիքի ոլորտի համար մույնպես ստանանի պաշտման փակ լինելու գործունը աննախակար է: Այսպիսով անհրաժեշտ է վեր հանել է քաղաքական այն ոլորտները, որտեղ համագործակցությունը ստանանների փակ լինելու պատճառով դատապարտված չէ շատ շուտ ինքնամարման:

Գործարարի համար իր գործունեության զարգացման ժամանակացույցն ու օրակարգը խիստ կանոնակարգված է, որտեղ հուսով ստաննանք են նպատակներն ու դրանց իրագործման ժամկետները: Նման ծրագրերը, որոնք ուղղակիորեն չեն առնչվում գործարարների անմիջական գործունեության հետ, պետք է ունենան մի առանձնահատկություն. դրանք պետք է գործարար ծրագրի նման ունենան հուսով մակերկրված նպատակ, դրան հասնելու հուսով ծրագրված միջոցառումների ցանկ: Ավելին նման ծրագրերը պետք է ունենան կոչու ժամանակացույց, հնրաջա փառիտությունները դոմորների կամ արտաքին ինչ-որ գործունների ազդեցությամբ պետք է բացառվեն, է, որ ոչ պակաս կարևոր է, ունենա ինտենսիվ է համեմատաբար հազեցված օրակարգ: Մրա անհրաժեշտությունը պետք է քննարկել այն հանգամանքով, որ նմանօրինակ գործունեությունը, գործարարի համար ունենալով երկրորդական նշանակություն իր ինչնից համեմատ, պիտի վերջինիս կողմից «տեղադրվի» իր առկա ծրագրերում, իր սեփական ժամանակացույցում: Հետևաբար այսօրինակ ծրագրերի առնկված առաջինը մեկ տարում նախատեսվող բոլոր ինչ ինչ շատ ժամանակատար միջոցառումներն ու գործողանները, պիտի վարդորք հայտնի լինեն է տեղ գտնեն գործարարի ապագա պլաններում:

«Կեղծ լավատները պետք չեն: Հասարակական դիվանագիտությունն անընդհատ գործընթաց է, որն անընդմեջ է հետևողական քայլերն է պահանջում, քննիչի էլ՝ կարելի: Սա մի գործընթաց է, որ ժամանակով է ինքնմաժակվում. բոլր ծրագրերը լայնամասշտաբ չլինեն, քայց անընդհատ լինեն, բոլր ծրագրերի շարքը վարդիլ

այնքան ժամանակ, մինչև խնդիրը չի լուծվի: Թե ընդմիջում եղավ, ամեն ինչ հարկ կլինի սկսել սկզբից»:

Գործարարների մասնակցությամբ ծրագրեր իրականացնելիս, քանի դեռ այն ֆինանսական տեսանկյունից ինքնագարգացող չի դարձել, թերևս, հարկ է ավելի մեծ գումարներ ծախսել: Իրականացված ծրագրի տեսանկյունից ֆինանսական միջոցները կարծես բավարար էին, սակայն բավարար չէին ավելի մեծ տրամաչափի գործարարներ, խոշոր հովիհագների ղեկավարներ ներգրավելու համար ծրագրի շրջանակ՝ այն որակապես այլ մակարդակում իրականացնելու համար, քանի որ պետական քաղաքականության հարթությունում այսօրինակ գործարարների ձայնը շատ ավելի լսելի է:

Կանանց ամսագիր

«Գործարար կանանց դերը խաղաղազինության գործընթացում»

Կանանց խնդիր ու համայնքից համար գտնվում են քաղաքացիական հասարակության խաղաղաշինական մասնամեծությունների իրականացման ասպրիզ գծում՝ աշխատելով որպես համայնքների համահարթորներ, միջնորդներ և հրկիտության խթանողներ, ենչյախ մաս հավանաբար կործնի հաշտեցման գործընթացի նախամեծություններ: Լճան նախամեծությունների բազմաթիվ օրինակներ կան, որոնք քայլականիս արդյունավետ են եղել»:

Միջազգային ահազանք
Տեղական գործարարություն, տեղական խաղաղություն, մասնավոր հատվածի խաղաղաշինական ներուժը
Գլուխ V

Ծրագրի իրականացման գործընթացը

«Կանանց ամսագիր» այսպես էր կոչվում հայ և թուրք կին համախմբագիրների կողմից պատրաստված ամսագրի փորձնական համարը, որ լույս տեսավ 2004 թվականին: Ամսագրի էջերում գետնոլված էին հողվածներ մշակույթի, առողջության, գրասաշրջության, երևիսների, նորածնության և խոհանոցի վերաբերյալ: Թողարկումը հարուստ էր մաս հայ և թուրք կանանց հետ տարբեր հարցազրույցներով: 96 էջանոց ամսագիրը, որը պարունակում էր հողվածներ հայերեն, թուրքերեն և անգլերեն լեզուներով, տպագրվեց 15 000 օրինակով և բաժանվեց Հայաստանում, Թուրքիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում:

Աշխարհի բոլոր երկրներում, այդ թվում մաս Հայաստանում և Թուրքիայում, կանայք թագմարթվ մնան խնդիրներ ունեն: Այս ծրագրի առանձնահատկությունը հենց կինն է՝ իր հոգեխոլվ, հետաքրքրություններով, մախախրություններով: Նպատակն է գտնել մեամությունները և առանձնացնել դրականները: «Կանանց կողմից, կանանց համար»,- այսպես են բնորոշում մախամեծությունը նրա հեղինակները: Նրանք իրենց առջև խնդիր են դրել կտարել մախապաշարումները ոչ միայն հայ-թուրքական հարաբերություններում, այլև կանանց հանդեպ մախապաշարումները: Կիզակետում ակտիվ կինն է գործուն, հաջողակ, ով դրական էնդոխա և հաղորդում:

Իբրև հասարակական դիվանագիտության ծրագիր՝ այն նպատակ ուներ Հայաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցություն ապահովել, վերացնել համատեղ արդյունք տառելելու համընչ պոյություն ունեցող վախը, մասնավորապես, ըստ մախամեծության թուրք համահեղինակների, թուրքական մամուլը չի պիտու այն ծրագրերը, որոնք Հայաստանի հետ են իրականացվում: Այս մախամեծությունը սեփական փորձով պիտի ցույց տա, որ դա հնարավոր է և նորմալ:

Ամսագիրն ընդգծված ոչ քաղաքական բնույթ ունի. թճան միայն կինն է՝ իր ցանկություններով, հաջողություններով ու նրազանրներով: Նախամեծողները հալատացած են, որ հենց դրանով էլ այն դառնում է «քաղաքական», ինչն իրականում

համագործակցության բաղադրականությունն է: «Մշակութային երկխոսություն» կանանց «շտրֆերով», որ ի գորտ է մերճնցել երկու ազգերին, բանի կամայ շատ քան ունեն ընդհանուր է այդ ընդհանրությունը հենց «կանացի աշխարհն» է, որ ազգային պատկանելիությունը չունի:

Երգիչը, որի շրջանակում տպագրվեց ամսագրի անդրամիկ օրինակը, հետագա զարգացում ունեցավ: Ամսագիրը շարունակեց լույս տեսնել նույնիսկ ծրագրի վախճանից հետո: Այն լույս էր տեսնում նույն ֆորմատով, նույն տրամաբանությամբ և արժեն որդեգրած մտնեցումներով: Ամսագրի երկրորդ և երրորդ համարների թողարկմանը նկատուցեցին արդեն նոր դոնորներ, հիմք դրվեց նաև գովազդների տնօրինման պրակտիկային: Այդպեսով, ամսագիրը հավակնում է պարզաբանակ բնույթ ունենալ, իսկ պարբերականությունը ընդարձակ է, որ ժամանակի ընթացքում այն դառնում է կանխատեսելի և սպասելի ընթերցողի համար: Մինևնույն ժամանակ համարից համար հեշտանում է նաև «հերոսներին» ընտրությունն ու նրանց հետ հարցազրույցները:

Շրագրի ուժը և թույլ կողմերը

Շրագրի ուժը կողմերը դիպուկ են մեկնարարում հեղինակ/լրագրագետները. «Շրագիրն իր բնույթով մշակութային է, ազատ ժամանցին ուղղված, ինչն էնդեցիտնալ ավելի խորն է ազդում»: «Կանայք մեն ազնեցություն ունեն, հատկապես ընտանեկան շրջանակում, իսկ դա ավելի երկարատև ազդեցություն է»:

Բուն ամսագրի գոյությունը լավագույն ապացույցն է հասարակական դիվանագիտության մշտականների հասարակության: Այսօրինակ ծրագիրը հավակնում է շատ ավելի երևա ինքնաշարունակելու դասում, քան իր. ընդգրկելով բավական մեծ լարանք, մի քանի համարների հասցը թողարկումից հետո այն կարող է գովազդների ներգրավման լավ հիմք ստեղծել, հատկապես կանանց ուղղված ապրանքների մատվ:

Շրագրի ուժը կողմերից հարկ է առանձնացնել այն մտուցումը, որ որդեգրվեց ամսագրի նյութերի հավաքագրման և մատուցման համար: Մոլորաբար պարիտես և պոսիտիվական էրը գրվում է արև յուրյան հայ կնոջ մասին, փորձ է արժան նույն որտրես ակտիվ թուրք կնոջ մասին ևս գրել: Սա համայն հետագա համագործակցության մախախիթ է դառնում, երբ տվյալ հայ և թուրք կանայք ընթերցելով միմյանց մասին, փորձում են համընթաց և համատեղ ծրագիր նախաձեռնել: Այդպիսի դեպքեր արձանագրվել են:

Շրագրի թույլ կողմերը նույնպես կապվում են ամսագրի կազմման մտուցումների հետ, որոնք նախատեսուց են արվել ինչն ընթերցողների կողմից: Մասնավորապես կին ընթերցողները (փաստորեն ամսագրի նենց բուն հասցեատերը), ամսագրի հետագա ուժեղացման տեսանկյունից նշում են, որ այն կարիք ունի կտարակազորմանը՝ ընթերցողին առավել հրապուրելու համար: Նշվում է, որ հայերեն տեղադր ղծարը ընթերցելի է, արևելաստիաներին ու արևմտահայերենն անընդհատ խառնվում են, շարվածքն առանձին հատվածներում խիտ վառող է: Արդյունքում ամսագրին հաճույքով ծանոթացել են միայն այն հայ կանայք, ովքեր յուրաքանչեռն են անգլեզերենին:

Ավելին, հայտնի է, որ կանայք երկար տեղատեր չեն սիրում: Մինչդեռ անապիթն առանձնանում է երկարաշունց հոգովմեծերով, իսկ բանի այն ժամանակյան բնույթ ունի, ապա հարկ է, թերևս, ավելի շատ շեշտադրումներ անել կարճ ու գրավիչ ակնարկներին:

Ազնեցությունը շահառուների տարբեր խմբերի վրա

Ամսագրի օրինակները մեծ բանակութայնությամբ բաժանվել են թե՛ «Թուրքայում, թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում: Ամսագրի բոլոր թողարկումների վերաբերյալ բազմաթիվ արձագանքներ են ստացվել. ծրագրի իրականացումը բողբալան կողմը վկայում է, որ ի բիվա բողբ ընթերցողի՝ հատկապես մեծարանակ արձագանքներ են ստացվել Արամբոյի հայ համայնքի կողմից: Նրանք կարդում են հայտնի հայ կանանց մասին և դա համարում շատ հետաքրքիր:

Արձանահիշատակ դիտարկումներ են անում նաև հայաստանցի կանայք. «Առաջին տեսլիցիան, որ ունի ամսագիրը բացելիս, թերթն էր, որպեսզի տեսնեմ, ո՞ր արչոյը հայերն ու թուրքերը համամասնորեն են ներկայացվում: Հշիտեն ինչու, լույս առաջին միտքը դա էր»: Առաջին՝ նախադրման ընթացքում էնդիպաները դրակներեն քավարակուցից հետո, ամսագիրն ընթերցողի համար դառնում է արդեն գրատ տեղեկատվութայն միջոց, որը նախ և առաջ ուշադրավ է կանանցի հետաքրքրասիրությունը շարվելու տեսանկյունից: «Տպագրություն շատ նորնալ է. մեր նման կանայք են ապրում փակ սահմանի մյուս կողմում, ունեն իրենց հոգսերը, իրենց աշխատանքը, հետաքրքրությունները և դրանք, կարծես, մոյան են, ինչ մեզ մոտ», - նշում է հայ ընթերցողների մեկը:

Ամսագրի գոյության վիտտի վերաբերյալ կիմնակառման դրակն արձագանք է ստացվել սահմանի երկու կողմերում էլ: Ասողի ընթերցում են ամսագիրը, և պատրաստ են ընթերցել աղագայում ևս: «Երբ ատամ են «Թուրքիս, նս ներպաշտանցորեն յարվում են, մերթուստ պաշտպանողական դիրք ընդունում: Սա ինքնատիրյան է փնտն, ներպաշտանցական հարրությունում: Գիտակցական մակարդակում նս Հիման կարիք են գգում, ազգում են իմանալ ովքեր են բողբերը: Ամսագրի գոյությունն իսկ հասակ քայլ է այս ուղղությամբ: Սա շինման միջոց է, ընդ որում՝ լավ միջոց»:

Համատեղ ամսագրի թողարկումը մեծ փորձ էր հատկապես հայ և թուրք լրագրողների և խմբագիրների համար: Նրանք վկայում են, որ մեկ քան է տեղական ամսագիր թողարկելը և բացարձակապես այլ քան՝ համատեղ թողարկումը, այն էլ, երբ մեկ ընդհանուր գործ են անում երկու ոչ բարեկամ երկրների քաղաքացիները: Սա մեծ դաս էր, թե նման իրավիճակներում ինչպես պետք է և ինչպես չի կարելի համատեղ աշխատել:

Ամսագրի թողարկումները տարածվել են ոչ միայն հանրային խոտովակներով: Վրանք հասանելի են եղել նաև կառավարական շրջանակներում: Ավելին, ակնատեսները վկայում են, որ բարձրաստիճան հանդիպումներից մեկի ժամանակ «Թուրքայի արագորձանախարա Արզուլաս Գույն ամսագրի առաջին համարը նկրել է: Ասորան Օսկանյանին, իբրև ամսագրույց, թե մեր երկու երկրների կանայք ինչպես են համատեղ աշխատում:

ԻՆչ դասեր կարելի է քաղել

Ծրագրի գաղափարն իսկապես արդիական է ու գործուն: Խնդիրն այն է, թե ինչ որակով պիտի իրականություն դառնան այսօրինակ նպատակադրումները: Մի բան ակնհայտ է. եթե ուզում ենք երկարատև կայուն արդյունքներ ունենալ, այսօրինակ ծրագրերի արդյունքը, լինի դա թեթ, ամսագիր, թե հաղորդում, պիտի «շուկայուն» մրցույթով լինի, իսկապես «սպորտային» լինի, իսկ ուղ գործընթացը պիտի կամայականաց գործարար հիմքերի վրա դրվի: Անշուշտ, սկզբից հարկ կլինի ժամանակ ու ֆինանսներ ծախսել «դրեմոն» կայացման համար, սակայն ժամանակի ընթացքում ամսագիրը (հասարակական դիվանագիտության մեմբերինակ ծրագրի մեկ այլ արդյունք) պիտի էնդոյնալ դաշտից կառուցան անցնել «սովորականի» դաշտ: Սա է, թերևս, հաջողության և կայունության ամենակարևոր ուղին, ինչը մշակական է, որ չի կարելի ամսագիր հրատարակել գուտ հասարակական դիվանագիտության գաղափարախոսության և էնտուզիսմի հիմքով, այն նախ և առաջ սպառնք է, որ պիտի կարողանա «մրցումակ լինել կրպակի ցուցափեղկում», հետևաբար վերջնական արդյունքի ստեղծման փուլում պիտի պրոֆեսիոնալ մարդիկ և կառույցներ մերգրավվեն՝ պրոֆեսիոնալ լուսանկարիչ, տղազոր, դիզայներ, տպագրատուն, տալաման ցանց և այլն:

Ինչպես ցույց տվեց այս ծրագրի փորձը, մեմբերինակ նախածնություններում իրականացման ողջ ընթացքը, բոլոր փուլերը պիտի կատարվեն երկու կողմերի հավասարազորության հիմքի վրա, որպեսզի արդյունավետ լինեն: Եթե ինչ-որ տեղ խախտվում է հավասարության նժարը, ծրագիրը կորցնում է աննականությունը՝ վստահության մթնոլորտը, ինչը կարող է դառնալ անհաջողության հիմնական կտվաճը:

Հաշվի առնելով հասարակական դիվանագիտության ծրագրերի զգացական բնույթը՝ շատ կարևոր է խիստ նրբանկատ լինել կողմերի էնդոյնալ ընկալումների հարցում: Օրինակ, տեղա՛մունքներ օգտագործելիս հարկ է ավելի գզել լինել, կողմերը շատ խանդոտ են այդ հարցում: Եթե հայերեն և բուլղարերեն տարբերակներում ցանկացած տեղա՛մունք հանգիստ կարելի է և օգտագործվում է այն տեսքով, որով ընդունված է անվանել տվյալ լեզվում, ապա անգլերենը կունկրտ լուծումներ է պահանջում, որոնք չեն «նեղացնի» կողմերից ոչ մեկին:

Երկրեզու կամ եռալուզու պարբերական բողարելիս, հարկ է հաշվի առնել թիրախային խմբերի լեզվական գերասպտությունները: Եթե նախատեսվում է, որ ամսագիրը պիտի հայաստանցի կնոջը մտնեցնի բոլոր կնոջը, ապա լեզուն պետք է արևկախախերենը լինի: Սա խնդիր է, որին տվյալ ծրագրի շրջանակներում անդրադարձել են հարցման ներթարված գրերն բոլոր հայաստանցի ընթերցողները:

Ծրագրի հասցեակառույթյան տեսանկյունից պետք է կարևորել նաև տպագիր նյութը թարանին հասցենելու գործուն մեխանիզմ ունենալու անհրաժեշտությունը: Միայն բաժանելով ու նվիրելով ճիշտ չի ապահովել ամսագրի տարածումը, այն անպայման պետք է վաճառվի, միայն այդկերպ ամսագիրը կիսանի իր իսկական ընթերցողին: «Գումար է տալիս և ապրանք գնում միայն նա, ով իսկապես ցանկանում է այն ունենալ: Ես դեռ մեղ կրպակներում չեմ տեսել ամսագրի համարներից որևէ մեկը», - նշում է ամսագրի ընթերցողներից մեկը:

ԼԵԳ

Տպագիր նյութի միջոցով երկու հարևան երկրների միջև գոյություն ունեցող առաջ հարաբերությունների շրջաշրջ պատռելու նախածնությունը բավականաչափ խրթին է ոչ միայն հասցեատեղիք վրա իրական ազդեցություն ունենալու, այլև հենց լուծ նախածնություններ իրականացնելու տեսանկյունից: Չ՛, որ ծրագիրն իրականացնողներն իրենց այդ հասարակությունների մասին չեն, և հենց իրենք ունեն իրենց նախապաշարումներն ու կանխակալ մտածողությունները: Լճան բարդ ծրագիր իրականացնելիս այդ փաստը հաշվի առնել չի կարելի: Լուծումը միանշանակ է. երկու կողմի իրականացնողները շատ հաճախ պիտի փոխալցություններ ունենան, անընդհատ շփվեն և խոսեն բովանդակության շուրջ: Փոխադարձ այցելություններ պիտի լինեն յուրաքանչյուր համարի բողարման սկզբում և վերջում: Սա ծախսատար, սակայն ինչպես վերոնշյալ է ցույց տալիս, իսկապես անհրաժեշտ գործուն է այսօրինակ ծրագրերի արդյունավետ իրականացման համար:



Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողով

«Կասարական գիվանագիտությունը խնդիրների լուծման վարժություն է: Այն հնարավորություն է ընձեռում յարգանքի քառաթարքների ներդրումը հակամարտության կասեցման համար և քննադատել խնդիրների լուծման միասնական ռազմավարության մեկտրման օրոշներն առում: Դրա նպատակն է իրական համագործակցությունը, որպեսզի քի վերջ հակամարտությունը ընկալի որպես բնիստություն իրենք, որի լուծումը կանխված է երկու կողմերի համատեղ քան բերից: Յեն հասարակական գիվանագիտության ստանդարտները պայտանական գործընդունների ակնկալությունն է, այնուամենայնիվ այն կարող է արտաքին գիվանագիտական գիվանագիտությունը: Երբ այն անբարեկամ համայնություն է գիվանագիտական համաձայնագրությունների ստոր:

Դեյվիդ Ֆիլիպ, «Պատելով անցյալ սթորը լուրջան շղարք»

Օրագրի իրականացման գործընթացը

Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի (ՀԹՀՀ) ստեղծման հիմքում ընկած էր հետևյալ մտահղացումը՝ ստեղծել քաղաքական մի հենարան, որը երկու ժողովուրդների թույլ կտար ընմարտել երկրիչայն հարաբերությունների ամենախնդրահատույց հարցերը: Նախաձեռնությունն նպատակներն է սկզբանե հստակ չլին: Մտահղացման հենց սկզբից ծրագրի նախագիծը բնութագրվում էր որոշակի երկխոսություններ, որը հետագայում էր ազդեցություն ունեցավ թե՛ ծրագրի իրականացման գործընթացի, թե՛ դրա արդյունավետության վրա: Այն ներհատուկ երկխոսությունը, որն արտադրված էր ծրագրի պայմանների մեջ, թույլ տվեց որոշակի ընդլայնություն գտնել և ներդրումները տարբեր քաղաքական նպատակները: Թուրքական կողմի համար ՀԹՀՀ-ն եզակի մի նախաձեռնություն էր, որի նպատակն էր լուծել հայերի և թուրքերի, Թուրքիայի և Հայաստանի միջև առկա հիմնական անհամաձայնությունները: Հայերի ընկալումը և գրեթե նույնամանակ էր: Նպատակը հիմնախնդիրների մեկի՝ Յերուսաղեմի քաղաքական ընմարտման համար անհրաժեշտ պատշաճ խնդիրն էր, ինչպես նաև առկա առնակություն հարաբերական հնարավորությունների բացահայտումը: Օրագրի մտահղացումն առաջագլխից թուրք-իսրայելական հասարակական գիվանագիտության փորձի կենտրոն, և հույս կար, որ այն կաշխատի նաև հայերի և թուրքերի դեպքում: Հանձնաժողովի թուրք անդամներին ամենագլխապես տրվեց էր այն համակարգը, որ հայ անդամների մեկնարանությունները կարող էին տարբերել իրենց մեկնարանությունները: Սակայն, ծրագրի նախաձեռնման ընկերությունը և ծրագրի տեխնիկական նկարագրի երկխոսությունը, ըստ էության, անհրաժեշտ նախապայմաններ էին երկու կողմերի միջև փոխընդունում ստեղծելու և ընթացի ծրագրի մեջ ամրոցումը ներդրումը, սակայն նման ընկերությունն ապահովության որոշակի գաղտնի էր ներշնչում, քանի որ անհրաժեշտության դեպքում այն խտսանավելու հնարավորություն էր ընձեռում:

Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը կազմավորվեց 2001թ. հուլիսին, Փնեում, մի հստակ նպատակով՝ բարեխալի հարաբերությունները Թուրքիայի և

Հայաստանի միջև: Այս նպատակին հասնելու առաջնային մեխանիզմը կառավարական և ոչ-կառավարական նախարարակներում համախալի փոխհարաբերությունների հաստատումն էր: Սակայն այս համատեղ նախաձեռնության համար անհրաժեշտ երկխոսությունը թույլ էր տալիս բացահայտել հայասրաբերու հանդիպումների նպատակները: Այդ հանդիպումները սովորաբար կազմակերպվում էին տասնյակ որևէ կոնկրետ օրակարգով:

ՀԹՀՀ կազմված էր թուրք և հայ նախկին պետական պաշտոնյաներից և քաղաքականական հասարակության առաջնորդներից: Հայկական բիւռնո ընդգրկված էին նաև սփյուռքային: Երբ հայտարարվեց նման հանձնաժողովի ստեղծումը մասին, նախաձեռնությունը ղղումվեց իրև պատմական թայլ՝ ողղված լուծելու պատմական հիմնախնդիրները և հնարավորինս աջակցելու Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բարեխալմանը: ՀԹՀՀ-ի նպատակներից մեկն էլ հարաբերությունների բերմանում էր՝ հասարակական գիվանագիտության նախաձեռնություններում ներգրավված քաղաքացիական հասարակությունների միջև նոր շիւռնոն խրախուսելու միջոցով: Հիմնական միտքը էր ՀԹՀՀ-ն ընդլայնել և վերածել առավել լայն «խորհրդատվական խմբի»՝ այս գործընթացում ներգրավելու երկու երկրների քաղաքացիական հասարակություններին: Երազիքը կոչված էր սպառնալուց: այնպիսի միջավայր, որը կբացարձեր հայերի և թուրքերի հանդիպումները, ամենատպան հարաբերությունները կբարձրացներ և թույլ կտար բազմաթիվ բարդ խնդիրների ամրոցումը նոր ճանապարհներով: Նման համաձայնության ամենամեծ առավելությունը իրողությունն անդին նայելու ունակությունն է և համագործակցության առավելությունների շոյալիելի ակնկալիքը:

ՀԹՀՀ-ն մեկ այլ դեր ու ունեց, որն է, ամրոցը քաղաքական ճնշումը վերցնել իր վրա և թույլ այլ հասարակական գիվանագիտության մեջ ներգրավված այլ կառույցների գործել ավելի ազատ: Այս տեսակետից, երկու կողմերում էլ նախկին պետական պաշտոնյաների ներկայությունը, բերու, պատասխան էր: Դրա նպատակն աջակցել էր պաշտոնական քաղաքականության գերակատարների միջև հարաբերությունների ստեղծմանը:

Ուժեղ և թույլ կողմերը

Ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ այն նպատակները, որոնք էլ սկզբանե որվել էին ծրագրի առջև, իրականացվել են: Դրա վրա ցուցանիչներից մեկն այն է, որ ՀԹՀՀ-ի գործունեությունը միշտ լուսաբանվել է մամուլում: Անկախ միասին դա որակալն, թե քաղաքական մեկնարանություն է եղել, այն հնարավորություն է ընձեռել երկու երկրների հասարակություններին կարողալ հայ-թուրքական հարաբերությունների մասին: Երկրորդ, այն քաղաքական շոյալիելի արդյունքի հանգեց, մասնավորապես, Անտոմային արդարադատության միջազգային կենտրոնը (ICTJ) թայ-մանավալը մի գեկույց պարտատես 191թ. իրադարձությունների մասին: Այնինքն, հանձնաժողովը կազմեց այսպես կոչված «ուղեցույց», այսինքն գործողությունների մի ցանկ, որը ներկայացվեց երկու կառավարություններին՝ որպես սպալա գործընդունների հնարավոր տարբերակ:

Տեխնիկական տեսակետից ծրագրի իրականացման գործընթացն այնքան էլ հարթ չըբարգավ: Նույնիսկ այդ գործընթացը դադարեցնելու փորձեր կայան: Ի

լրումն, ՀԹՀՀ գոյության ընթացքում փոխվեց համեմատողի անդամների կազմը- փաստ, որը վիսյուտ է այն մասին, որ որոշակի խնդիրներ կային նաև կապված մաս- նակիների բնութային հետ, հատկապես բուրջական կողմից: Այնուամենայնիվ պետք է նկատել, որ ՀԹՀՀ-ն ավելի շատ բարձրակարգ ծրագիր էր, որով էլ պայ- մանավորված էր այն համեմատմանը, որ որևէ կողմերն ծրագրային ձևայալի շրջանակից այս ծրագրի իրականացման համար: Չկային ծրագրերի առաջնություն, ժամանակացույցեր և օրակարգեր, որոնց պետք էր խստորեն հետևել: Եկտնություն նման մակարդակն էլ հենց թույլ տվեց հասնել ծրագրի նպատակների իրագործմանը:

Ըստ Լուրյան, ծրագրի ընթացքում չկար շահերի համադրում, կային տարբեր շահեր հետապնդող շրջանակներ: Տարբեր բազարական խնդիրների ավարտությունը բավականին բարդացրեց էր միջնորդության խնդիրը: ԱՄՆ Պետությանառնմանում էր որոշյան նպատակներն ուներ, և իր միջնորդական առաքելությունն իրականացնելիս ավանդաբար չէր կարող հաշվի չառնել դրանք: Եվ՛ բուրք, և՛ հայ համե- մատողականներն ունեին իրենց համապատասխան բարձրակարգ խնդիրները, և դրանք նույնպես, այսպես թե այնպես, արտացոլվում էին քննարկումների սեղանի շուրջ:

Հաջող կետը, որին ամերիամեշտ էր ուշադրություն դարձնել, բոլոր կողմերի ներգրավման սկզբունքն էր: Այն չափազանց կարևոր էր և պետք է ընկած լիներ ծրագրի նախագծման հիմքում: Կարևոր էր, որպեսզի համեմատողի անդամները ներկայացնեին գոյություն ունեցող տեսակետները: Սա ենթադրում էր, որ նրանք թվում կլինեին նաև կոշտ դիրքորոշման պաշտպաններ: Մասնավորապես, քստ համեմատողի բուրք անդամներից մեկի, ակնկալվում էր, որ հայկական կողմում կընդգրկվեին ներկայացուցիչներ սփյուռքահայ այն համայնքներից, որոնք ձևա- վորվել էին 1915թ. իրադարձությունների արդյունքում: Մինչդեռ չի կարելի պնդել, որ հայկական սփյուռքը համեմատողվում ներկայացված էր ամբողջությամբ: ՀԹՀՀ-ն բուրք անդամներիին այս հարցը բավականին հուզում էր: Երանց կարծիքով ՀԹՀՀ-ն պետք է ներգրավեր, օրինակ, Ֆրանսիական և իրանահայ համայնքների ներկա- յացուցիչներին: Համեմատողի թուրքիան ներկայացնող անդամներից մեկը նշում է, որ բուրք պատվիրակները նաև կարծում էին, որ այս գործընթացում պետք է ներգրավել նաև սփյուռքում մեծ տարածում ունեցող կուսակցությունների, օրինակ՝ Հայ Հեղափոխական Դաշնակցավորության ներկայացուցիչներին: Երանք ընդհան- րապես խորատեսում էին կոշտ դիրքորոշման տեղ ներկայացուցիչների ընդգրկումը համեմատողվում, որը հավասարապես վերաբերում էր երկու կողմերին, օրինակ, քստ Լուրյան, Թուրքիայի նախկին պետական պաշտոնյաներից չէր կարելի ակն- վախել, որպեսզի նրանք ընդունեն այնպիսի դիրքորոշում, որը տարբերվեր պե- տականից: Այդուհանդերձ, նրանք պնդում էին, որ իրենց պատրաստ են բաց քննար- կումներ ծավալել այս դիրքորոշումների պաշտպանների հետ:

Ֆինանսական և մարդկային ռեսուրսների տեսանկյունից ծրագրին ցուցաբե- րած աջակցությունը, քստ կողմերի ներկայացուցիչների, բավարար էր: Մակայն կարծիք կա, որ կառավարման տեսանկյունից ծրագիրը բարեբախվման կարիք ուներ: Ընդհանուր թիմային ուժի, ընդհանուր պատասխանատվության գզացում կամ համե- քաշխարհայ մրկորտ ստիդեղումն ուղղված միջնորդական նախամեղմություններն, օրինակ, արմատական արդյունքներ չէին տալիս ու, թերևս, չէին էլ կարող տալ: Իսկ

այս ամենը չափազանց կարևոր նախապայաններն էին այնպիսի մի համատեք- տում, որն ընտրագրվում էր անընդհատ յարվածությամբ ու առկա ճնշումներով:

Յեղապանության հարցը շարունակում էր մնալ օրակարգի կարևորագույն խնդիրը: Թեև այդ օրակարգն առավել բազմազան դարձնելու համար փորձեր արված էին, ՀԹՀՀ բոլոր քննարկումներն ի վերջո հասնում էին ցեղապանության խնդրին, որը բուրջական կողմը բնութագրում է որպես վկայում մի հարց, որից խուսափելն ուղղակի անհնար է ք :

Ըստ բուրջական կողմի, ՀԹՀՀ-ն կարողացավ հասնել որոշակի արդյունքների: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին ուղղված (ICTJ) խնդ- րակնք՝ ուսումնասիրել, թե արդյոք 1948թ. ԱՄՆ-ի կոմիսիցնյան կիրառելի է 1915թ. դեպրերի համար, համեմատողի աշխատանքների ամփոփիչ փուլն էր: Մակայն, պետք է նշել նաև, որ վերջնական զեկույցը որևէ կողմերն ազդեցություն չունեցավ, քանի որ կողմերից ոչ մեկը չհամաձայնվեց ուսումնասիրության արդյունքների հետ:

Եվ վերջապես, եթե պետք է քննարկել այն հարցը, թե արդյոք ծրագիրը հա- ցողված էր, թե ոչ, պետք է անպայման նշել ՀԹՀՀ երեք հանդիպումների մասին՝ Ստամբուլում, Լոնդոնում և Մոսկվայում: Ստամբուլի հանդիպումն իրականում ծրագրի կարևոր անկյունաքարերից էր: Մակայն ՀԹՀՀ-ն կրթիչ էր իրավիթիլի Հա- րաստանում, փաստ, որը բերեա հարցաքննել տակ է առնում հարաբերությունների հավասարության խնդիրը, իսկ հավասարության սկզբունքն ուղղակի ամերիամեշտու- րյուն էր ծրագրի շարունակությունն ապահովելու համար:

Արդյո՞ք ծրագիրը հասկեցրեց որևէ դրական (կամ հակառակ) փոփոխություն

Նշանակալից առաջինաց արձանագրվեց 2001թ. ի վեր: Այս առաջինացն ատակել նկատելի էր բարձրացիական հասարակությունում, որտեղ ուղղակի շիտմ աստիճիլիկու համար առկա խոչընդոտներն այլևս անհամարաբարելի չէին, իսկ ստա- տիցման գործընթացը ոչ միայն սկսվել էր, այլև ընթանում էր ՀԹՀՀ-ից և պաշտո- նական հարաբերություններից ամկալա: Բհարկի, դիրքորոշումների մեջ էական տարբերությունները շարունակում էին գոյություն ունենալ, սակայն այդ տարբե- րությունները հարցասարելու համար սեղված շարժումը հենց այն էր, ինչին ձգտում էր ՀԹՀՀ-ն:

Այդուհանդերձ, կային նաև բացասական արդյունքներ: Հայկական կողմի հա- մար դրանք մասնավորապես երկում էին: Նախ, հաշվի առնելով, որ հայկական սփյուռքը բավականին բարձրակազմաված է և իր նախապատվություններն ար- ասանաչում է, հարիտիլ տարբեր բարձրակազմ կուսակցությունների, մտահոգու- րյուն կար այն պատճառով, որ ՀԹՀՀ-ում ներկայացված չէին բոլոր գործող ուժերը: Սա նշանակում էր, որ ցանկանած արդյունք, որը ՀԹՀՀ-ից էր ապահովելու էր, պետք է արժանանար այն ուժերի անհամաձայնությանը, որոնք րաու էին մնացել այդ կողմընթացից: Երկրորդ, «ժաշտեցում» բառն ինքնին բազմարիվ անգամներ սխալ մեկնաբանությունների տեղիք էր տվել, և այս համատեքտում այն շատերի համար ընդունելի էր:

Պիտր Է ճել նաև, ԱՄՆ-ում այն արդարադատության միջազգային կենտրոնի (ICTJ) կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները չօգտագործվեցին հայկական կամ թուրքական որևէ պետական կառույցի կողմից: Այսպիսով, կարելի է ասել, որ այն իր տեղը չտավ որպես ծրագրի արդյունք: Փոխարենը, երկու կողմում էլ պաշտոնական կառույցներ և մամուլը փորձեցին ժխտել գտնվածը կապ ՀԹՀ-Հ գործունեության հետ, ինչի արդյունքում երկու երկրների հասարակություններում էլ որևէ շոշափելի փոփոխություն չարձանագրվեց:

ՀԹՀ-Հ նախագծման քաղաքիչներից մեկը ճանապարհի հարթում էր քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի համար, որպեսզի վերջիններս կարողանան առավել ակտիվորեն համագործակցել: Ասկայն էր համճամոդից գործունեության այս հարթությունը երբեք չցանկանալիս որպես այդպիսին: Բոլոր այն կազմակերպությունները, որոնք մինչ օրս հասարակական ղեկավարության ծրագրերի են իրականացրել, կարծում են, որ այդ գործունեությունն արդյունք էր նման միջոցառումների իրականացման անհրաժեշտության, և ոչ: Եր չի խոսում այս ոլորտում ՀԹՀ-ի դերի մասին: Այնուամենայնիվ, կոն փաստեր, որոնք վկայում են, որ հենց ՀԹՀ գոյությունն է բոլը տվել, որպեսզի այդ կազմակերպությունները կարողանան ակտիվորեն մասնակցել նման ծրագրերի՝ առաջնորդվելով «Եթե նրանց հաջողվել է, ապա ինչ»՝ նույնը չպետք է հաջողվի նաև մեզ» տրամադրությամբ:

Ազդեցությունը շահառուների տարբեր խմբերի վրա

Ցանկացած ծրագրում ներգրավված լինելը վերջիվերջ հանգեցնում է հարաբերությունների փոփոխման, սակայն միշտ չէ, որ դա վերաճում է համագործակցության: ՀԹՀ-Հ չլիբանուցեց հայ և թուրք մասնակիցների միջև համագործակցության, սակայն միանշանակորեն այն բոլը տվելը նրանց ձևավորել առավել սերտ հարաբերություններ, հատկապես ազգային թիվերում: Ավելին, հայ և թուրք թիվերի միջև հանդերձողակամության աստիճանը ևս բարձրացավ: ՀԹՀ-Հ կարողությունը՝ միասնական հարաբերություններ զինել ICTJ-ին և կազմել առաջարկների ցանկ, արդեն իսկ վկայում է այն մասին, որ համագործակցության որոշակի աստիճան, անկախ նրանից, թե որքան էր այդ աստիճանն, այնուամենայնիվ, առկա էր:

ՀԹՀ-ն ձևավորվել էր որպես քաղաքացիական կառույց, իսկ նրա զիրը երկու ժողովուրդների հարաբերություններում առկա բարդ և ցավոտ խնդիրների քննարկումն էր: Հաճախ նման քննարկումներն ավարտվում են նրանով, որ մի կողմը կիրառում է հակառակորդի առավել բացասական կերպար, փոխանակ փորձելու իրականում փոփոխել գոյություն ունեցող ընկալումները: ՀԹՀ-Հ նպատակն էր հարաբերակցել այս երևույթը և, ի վերջո, կանխելու ավելի ցրական վերաբերմունք: Դեփար է պնդել, թե ՀԹՀ-ն անդամների ընկալումները միայն որպեսզի փոփոխությունների են ենթարկվել: Սա վերաբերվում է նաև հասարակության ընդհանրապես: Այնուամենայնիվ, քննարկումները, որ ծավալվում էին ՀԹՀ-Հ-ում, կարողացան ինչ-որ պահի շեղվել թիվների և մշակույթի ոլորտում համագործակցության և փոխանակման հնարավորությունների քննարկման ուղղությամբ: Այս առումով ՀԹՀ-ն իսկապես մնալայն իր նպատակին և դարձավ ընկալումների փոփոխության կատալիզատոր: Փոփոխությունը միշտ չէ, որ որակապես ազդեցություն է բոլը:

բոլորի վրա, սակայն մի բան պարզ է. ՀԹՀ-Հ-ին իսկապես հաջողվել էր երկրների փոխադարձ ընկալումների «առաջադա թվեն»:

Երկու երկրների կառավարությունների ներկայացուցիչների միջև չլիբանուցեց ևս առավել հաճախակի էին դարձել 2001թ. ի վեր, սակայն պետք է փաստել, որ իրականում չհաջողվեց պահպանել այդ միտումը: ՀԹՀ-Հ նպատակներից մեկը երկու երկրների կառավարություններին առաջարկվեցին ներկայացնել էր, երկուստայան գործընթացի հաշտեցումը: Եր կազմավորման առաջին իսկ օրից համճամոդումն ակտիվորեն գրադվել է դրամով և՛ համընթաց, և՛ անհատական նախարարներում: Ինչ-որ պահի, որը հետագայում ազդարանեց ծրագրի ավարտը, ՀԹՀ-Հ մշտեց իր փաստաթուղթ, որը ներկայացնում էր համառոտ կազմակց առաջարկների մի ցանկ, թե ինչպես կարելի է քարեքարել պաշտոնական հարաբերությունները: ՀԹՀ-Հ պատմական փաստաթղթից մեկում նշվում է. «Այս առաջարկները քազմարկի ընտրվումների արդյունք են: Հնրացրում տարբեր հարցերի շարք խորհրդակցել կր հասարակությունների ներկայացուցիչների հետ, ովքեր ըստսահզված են այս խնդրով: Ըստեղեն են թե Հայաստանի, և՛ Թուրքիայում հասարակներ ընթանում առկա տարբերությունների ողջ լքջությունը, սակայն միաժամանակ զիտակցում են նաև լավ հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը: Այսպիսով, մենք կառավարությունների առաջարկում ենք ոչ միայն որոշակի հնարավորություններ թվենել, այլև ակտիվորեն և հրատալակալցորեն խրախուսել հարաբերությունների և փոխառության հաստատումը Հայաստանի և Թուրքիայի, ինչպես նաև ողջ արաբաաշրջանի երկրների միջև:

